Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2019 թվականի հոկտեմբերի 14-16-ը, Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա

4. Հրավիրող կողմը.

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Կայուն զարգացման նպատակների համար ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման գործում ներդրում» թեմայով համաժողովին մասնակցելու նպատակն էր ուսումնասիրել ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման նոր մեթոդներն ու հնարավորությունները՝ հետագայում Հայաստանում ներդնելու տեսանկյունից, ինչպես նաև ընդգծել առաջիկա տարիներին վերջիններիս հակազդմանն ուղղված միջոցառումների կարևորությունը:

6. Քննարկված թեմաները.

Համաժողովի ընթացքում քննարկվեցին և փորձով կիսվեցին այն երկրների ներկայացուցիչները, որոնք իրենց պետություններում իրականացվող առողջապահության քաղաքականությունը բարելավելու, ինչպես նաև ոչ վարակիչ հիվանդությունների հետ կապված խնդիրները լուծելու և ազգային զարգացման նպատակներին հասնելու նպատակով ներդրել են ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի գործիքը՝ կիրառելով տնտեսական ապացույցներ:

Համաժողովի առաջին օրը ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը մասնակցեց «Ներդրման գործիքի կարևորությունը» թեմայով պանելային քննարկմանը:

Համաժողովի երկրորդ օրը հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման առաջընթացի գործում ներդրման գործիքները կիրառելու հայաստանյան փորձը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում երկկողմ հանդիպումներ տեղի ունեցան տարբեր երկրների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Հրավիրված էին մասնակցելու ԱՀԿ անդամ-պետությունների և ՄԱԿ բարձրաստիճան ներկայացուցիչներ, առողջապահության և ֆինանսների նախարարներ, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Վերջիններիս հետ քննարկվեցին առողջապահության՝ մասնավորապես ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ոլորտում երկկողմ համագործակցության, հարցեր:

Մոսկվա կատարած այցի շրջանակներում Միավորված ազգերի կազմակերպության ՄԻԱՎ/ՁԻԱՀ ծրագրի Հարավկովկասյան գրասենյակի հրավերով Առողջապահության նախարարի տեղակալը մասնակցեց նաև ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համակարգող խորհրդի խորհրդակցությանը՝ ներկայացնելով Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի որոլտում Հայաստանում իրականացվող քաղաքականությունն ու երկրի ձեռքբերումները:

Կայացավ հանդիպում նաև ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ միացյալ ծրագրի գործադիր տնօրենի տեղակալ Շենոն Հաղերի և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ միացյալ ծրագրի

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների տարածաշրջանային տնօրեն Վինեյ Սալդանայի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համակարգող խորհրդի խորհրդակցության ժամանակ Հայաստանին հանձնվեց Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդմանն օժանդակող Ռուսաստանի Դաշնության աջակցության ծրագրի շրջանակում ձեռք բերված երրորդ շարժական կլինիկան: Հանձնման արարողության ժամանակ Լենա Նանուշյանը հանդես եկավ շնորհակալական խոսքով:

Խորհրդակցության ավարտին հարցազրույց տվեց տեղի լրատվամիջոցներին՝ վերոնշյալ միջոցառմանն առնչվող թեմայով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Մասնակից անդամ պետությունների ներկայացուցիչները ջանքեր են ներդնելու ստանձնած պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: Երկկողմ հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցող կողմերի միջև ամրապնդել փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

2019թ. հոկտեմբերի 17